

Մինչև ժե. դարու վերջերը, Օսմ. կայսրու-
թիւնը տեւական վտանգ մըն էր Եւրոպայի համար,
վասնզի տիրապետած էր ամբողջ Պալքաններուն,
Հունգարիոյ մեծ մասին, Սև Մովի հիւսիսային եզերք-
ներուն և հասած էր մինչև Լեհաստանի սահմանները:

Մինչև այդ թուականները՝ Թուրքերը որքան
ուժեղ էին, միացած, օժտուած առաջնակարգ քանա-
կով մը և ընտիր զօրավարներով, Եւրոպա ալ այնքան
պառակտուած էր և զինուորապէս թոյլ:

Ժե. դարու կէսին, Օսմ. կայսրութեան ե-
պարքոսութիւնը անցաւ Քէօփրիւլիւ ընտանիքին ձեռ-
քը: Մէհմէտ Քէօփրիւլիւ զբաղեցաւ ներքին բարենո-
րոգութեամբ, ջարդեց 36,000 ենիչերին և անվըս-
տանելի պաշտօնեաներ, մաքրեց պալատական կանա-
նոցը և կարգի դրաւ մայրաքաղաքը:

1663ին թշրական երկու բանակներ մտան
Աւստրո-Հունգարիա ու շարունակեցին գրաւումը մին-
չև Սիլեզիա, վտանգի ենթարկելով գերման և սլա-
ւոն քրիստոնեայ աշխարհը:

Տասը տարի յետոյ, այսինքն 1673ին, լեհա-
կան գահուն վրայ բարձրացաւ Ժան Սոպիեցքի (1673-
1696+), որ Լեհաստանի սպառնացող վտանգը տեսնե-
լով նախաձեռնարկ եղաւ կազմելու քրիստոնեայ ազ-
գերու զինակցութիւն մը՝ նպատակ ունենալով Թուր-
քերը վտարել Պալքաններէն: Ժան Սոպիեցքի իր
կոչին մէջ կ'ըսէր. «մեր միութեան մէջ է մեր ապա-
գան. հասած է ժամը Թուրքերը դուրս նետելու Եւ-
րոպայէն»:

Այս զինակցութեան կը մասնակցէին Աւըս-
տրիա, Վենետիկի Հասարակապետութիւնը և Լեհաս-
տան: Քանի մը տարի յետոյ՝ անոնց կը միանար նաև
Ռուսիա: Իսկ գլուխ կանգնած էր Հռոմի Պապը: